



### ԱԼԵՆ ՅԱՐՈՒԹ (ԱՐԱ) ՊԱԼԵԱՆ՝ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՏԱՆ ԶՈՐՐՈՐԴ ՓՈՒՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ

Նախարարաց խորհուրդը երկու անգամ իր ընթացիկ նիստին շարունակեց պետական վարչական նշանակումները, որոնց ծիրին ենթադրաբար Ալեն Պալեան (Արա) Պալեան նշանակուեցաւ Կեդրոնական Դրամատան չորրորդ փոխկառավարիչ: Ալեն Պալեան, 1968 թ. ծնունդ, բարձրագույն ուսում ստացած է Հարավային «ԵՆՄ»-ի, Հանրապետական շրջանային դրամատան նշանակուեցաւ Կեդրոնական Դրամատան չորրորդ փոխկառավարիչ: Ալեն Պալեան, 1968 թ. ծնունդ, բարձրագույն ուսում ստացած է Հարավային «ԵՆՄ»-ի, Հանրապետական շրջանային դրամատան նշանակուեցաւ Կեդրոնական Դրամատան չորրորդ փոխկառավարիչ: Ալեն Պալեան, 1968 թ. ծնունդ, բարձրագույն ուսում ստացած է Հարավային «ԵՆՄ»-ի, Հանրապետական շրջանային դրամատան նշանակուեցաւ Կեդրոնական Դրամատան չորրորդ փոխկառավարիչ:



### ՀՐԱ ՏԵՍԱԿՑԵՑԱԻ ԱՍԱՏԻ ՀԵՏ

Նախկին վարչապետ Սելիմ Հըս երկկ այցելեց Դամասկոս, ուր ընդունուեցաւ Սուրիոյ նախագահ Պաշ շար Ասատի կողմէ: Քննարկուեցան շրջանային իրադրութիւնները եւ անոնց ազդեցութիւնները Լիբանանի ու Սուրիոյ վրայ: Հըս Վանդիպուտեանը խորհրդակցեց Սուրիոյ նախագահ Ասատ Կառաճի կը մնայ Լիբանանի, Սուրիոյ եւ Պաղեստինի մէջ արաբական իրաւունքներու ձեռքբերման պայքարին, ինչպէս նաեւ իրաքի ժողովուրդին ազգային ինքնորոշման իրաւունքներուն: Դամասկոսէ վերադարձին, Հըս Ալնճարի մէջ հանդիպում մը ունեցաւ Լիբանանի մէջ սուրիական ուժերու ներկայացուցիչ զօր. Ռաթթմ Ղազալի հետ:

### «ՆԻՈՒԹԻ ՎԻ»Ի ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

Պատկերասփիւռի «Նիու Թի. Վի» կայանին դէմ ընդհանուր ապահովութեան ընդհանուր տնօրէն Կոր. Ժամիլ Սալիսի կողմէ բացուած դատին գծով նիստերը երկէ շարունակուեցան: Հինգերորդ նիստը ըլլալով, երկէ, յետմիջօրէի ժամը 5:30ին, ընդհանուր դատախաչ Ատան Ատունու նկատել տուաւ, որ որոշում մը տրուած է հիմնուելով վճռադատ ատենանի ընդհանուր դատախաչ Ռաֆիա Ամմալ Քատունու թղթածրարին վրայ: Վճիռը պիտի տրուի յառաջիկայ շաբթուան ընթացքին: Քատունուս որոշեց ապառ կացուցանել պատկերասփիւռի տնօրէն եւ սեփականատէր Խայրաթը, լուրերու հաղորդման խօսակա Տալիա Ամմալը, Ֆարսէ Թաուիլը, Թանիա Ռապպանը, Ֆատի Պապիին եւ Իպրահիմ Հալապիին, անոնց ապահովելով կեցութեան արտօնագիրներ: Որոշուեցաւ ապառ արձակել Համիլ Ծաուրին, իսկ Չուլֆիքար Քալապիին ներկայացուցած բժշկական յատուկ գիրը մերժուեցաւ եւ անոր աշխատանքներուն եւ գործունէութեանց շուրջ քննութիւն բացուեցաւ: Նշենք, որ Քատունու երկէ շուրջ երեք ժաման ընթացքին լսեց դատավարութեանց ներկայացուցիչներուն յայտարարութիւնները եւ ապա թղթածրարը փոխանցեց Ատունուին:

### ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԱՀԱԶԱՆԳ ԿԸ ՀՆՉԵՑՆԵ

Լիբանանեան Համալսարանի նախագահ Իպրահիմ Քալապի երկէ Համալսարանի Թանգարանի կեդրոնաւորելով մէջ տուաւ մամուլի ստույխ մը, որուն ընթացքին մտահոգութիւն յայտնեց, թէ Համալսարանին պիտու ճէկ կրճատուի լուրը սպառնալիքներ կ'ուղղէ Համալսարանին առաքելութեան: Ան հարց տուաւ, որ երկէ Համալսարանը պիտի չկարենայ նոր դասախօսներ ընդունել, ինչպէս պիտի արդարացնէ իր վրայ դրուած յոյսերը: Քալապի պնդեց, որ Համալսարանը լուրը վտանգի առջև կը գտնուի:

**«ԵՐԿԻՐ»**  
**ՅՈՒՆԻՍ 4 - ՅՈՒՆԻՍ 10**  
 ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- Հայկական պիզնէսի նպատակը վնաս ստանալու է ... էջ 1
- Կոռուպցիայի դեմ պայքարը ԵՄի պահանջն է ... էջ 3
- Ո՞վ է ուզում դառնալ արտգործնախարար ... էջ 4
- Նոր ջրի խնդիր ... էջ 6
- Եկատերիս 2րդը հեռանում է ... էջ 11
- Ինչո՞ւ ձախողուեցին ... էջ 14

### ՆԱԽԱՐԱՐԱՅ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԺՈՂՈՎԸ ՅԱՏԿԱՆՇՈՒԹԵՅԱԻ ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐՈՎ



Կառավարութիւնը երկէ Թանգարանի շրջանային կեդրոնատեղիին մէջ գումարեց իր ընթացիկ նիստը, որուն ընթացքին շարունակեց պետական վարչական նշանակումները: Նիստի աւարտին, տեղեկատուութեան նախարար Միշէլ Սրմազա կատարեց յայտարարութիւններ, որոնց մէջ յայտնեց, թէ կառավարութիւնը արտաքին գործոց նախարարութեան մէջ գործող երկրորդ կարգի 13 պաշտօնեաներ, որոնք կը վարէին խորհրդատուներու պաշտօն, նշանակեց դեսպաններ: Անոնք են՝ Սամիրա Հաննա Տահէր, Շրքի Ապպուտ, Սիլվի Ֆատալա, Սիլվիան Ռասի, Թոնի Պատուելի, Նայլա Ռիաչի, Ահմէտ Ապտալա, Ռաֆիք Ռահիմի, Մուսթաֆա Համտան, Ժատ Հասան, Հասան Մըսլամանի եւ Նուհատ Համուտ: Կառավարութիւնը տուն կանչեց նաեւ 12 այլ դեսպաններ, իսկ 20 այլ դեսպաններ կ'ընդունուին Լիբանանեան Համալսարանը, Արհեստից Ուսման Բաժանմունքը եւ Ուսումնասիրութեան կրթական կեդրոնը: Անոնք են՝ Մուհամէտ Շիա, Եուսէֆ Տիա եւ Լէյլա Ֆայատ: Իսկ ճարտարաբուետի մարզէն ներս նազարէթ Սապուրեան նշանակուեցաւ Ճարտարագէտներու Միութեան ներկայացուցիչ: Նիստի վարչապետ Սելիմ Հըս Վանդիպուտեանը նաեւ կ'ընդունուի:

### ՎԱՐՉՈՒ ՇԵՂ ՅԱՐԿԱԲԱԺԻՆ

●Ժլ էլ Տիպ, «Շարպոյեան» շէնք, 8րդ յարկ, 250 քառ. մետր, գեղատեսիլ դիրք: Դիմել՝ հեռ. 03 689408:

### ԿՈՒՉՈՒԻՆ

●Ոսկերիչ վարպետ սեւեթերներ: Հեռ. 01-243480:

### ԿՈՒՉՈՒԻ

●RHODIUM KING հաստատութիւնը կարիք ունի քարտուղարուի մը: Դիմել՝ հեռ. 01-259914:

### ԾԱԽՈՒ ՎԻԼԼԱ

●Աշքուրի հրապարակի մաս, երեք յարկանի + պարտեզ: Դիմել՝ հեռ. 01-268051 եւ 01-897511:

### ԾԱԽՈՒ ՏՈՒՆ

●Այնճարի մէջ, 3 սենեակ, խոհանոց, բաղնիք, բակ եւ պարտեզ: Գին՝ 25,000 \$: Հեռ. 03-657177 եւ 08-620722:

### «ՎԱՆԱՅ ՉԱՅՆ»Ի ԱՅՍՕՐՈՒՄՆ ՅԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ

- ժամը 8:30 Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ արաբերէն
- ժամը 8:45 «Աստղեր»
- ժամը 10:00 «Լուսարակ».
- Հարգալից իրադրութեան վերլուծումը.
- Կը ներկայացնէ ընկ. Հրաչ Վարժապետեան
- ժամը 11:30 Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում հայերէն
- ժամը 3:00 HIT PARADE (արաբերէն)
- ժամը 5:30 «Just spice of armenian jazz».
- ժամը 7:00 «Ուղեգիր»

**TANIA TRAVEL**  
 Sodeco Square - Rue Damas  
 Tél: (01) 616555 (pbx) - Fax: (01) 616561  
 Rue Sidani - Face cinema Jeanne d'Arc  
 Tél: (01) 739882 (pbx) - Fax: (01) 340473  
 Website: <http://www.taniatravel.com>

**CHARTERS**  
**ARMENIE**  
 Programme avec Tours (7 et 8 jours)

**ATHENES**  
 RHODOS, MYKONOS, CORFU & CRETE  
 Croisières vers les îles Gréques

**RHODES** (8 jours)  
 Départs tous les Mardis à partir du 15/07

**PARIS+CÔTE D'AZUR**  
 Avion + Grand choix d'Hôtels en B/B  
 Possibilité d'extension à Lourdes, Eurodisney etc.

**ITALIE** (du Nord et du Sud)  
 10 Programmes différents (8 à 15 jours)

**AUTRICHE**  
 Différents programmes, Hôtels, Tours

**ESPAGNE, PORTUGAL et MAROC** (Villes Impériales)  
 10 Programmes différents (8 à 18 jours)

**EGYPTE**  
 Le Caire & Croisière sur le Nil-Luxor & Assouan  
 Sharm el Sheikh, Hurghada, Alexandrie

**CIRCUIT TUNISIE**  
 Sousse & Hammamet

**MALAISIE & THAÏLANDE**  
 Différents programmes (Tours organisés)

**POSSIBILITES DE CREDIT**  
 Jai-el-Dib: 710305/67 / Jounieh: 913746/932468  
 Bihaya: 982040 / Kaslik: 211821/213321  
 Jbeil: 942744/943388 / Zahle: 809647/802592  
 Saïda: 730870/736870 / Timpil: 627755/602469  
 Amount: 950075

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ «ԲԱՐՍԵՂ ԿԱՆԱՉԵԱՆ» ԲՈՒԼՎԱՐ  
 Մեծանուն երգահան ԱՐԱՍ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԻ ԵՃՆՈՒՄԸ 100ԱՄԵԱԿԻՆ ԱՈՒԹՈՒՄ

**2002 - 2003 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ ՇՐՋԱՆԱԲԱՐՏՆԵՐՈՒ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐՈՒ ԲԱՇԽՈՒՄ ԵՆ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՈՒԹԵՏՈՒ ԸԱՄԵՐԳ**

Տեղի կ'ունենայ այսօր՝ Ուրբաթ, 4 Յուլիս 2003, երեկոյեան ժամը 7:30ին, Amphitheatre Pierre Aboukhaterի մէջ, Campus des Sciences Humaines, USJ.

ՀՐԱԲԵՐ

### ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

Իսրայէլեան ուժերուն հեռացումը Բեթղեհէմէն, Իրաքի մէջ աներկեան պիտուրներուն դէմ շարունակուող յարձակումները կը հանդիսանան լիբանանեան մամուլի երէկուան հիմնական լուրերը: Գլխաւոր լուրերու կարգին թերթերը անդրադարձան խորհրդարանի լիագումար ժողովի երրորդ նիստին եւ անոր ընթացքին տրուած որոշումներուն: «Նահար» գրած է, թէ վարչապետ Հարիրի յայտարարեց. «Լիբանան չի կրնար անհատներու կամ կուսակցութեանց կողմէ կառավարուիլ: Թերթին համաձայն, դիւանագիտական նշանակումներու առնչութեամբ որոշում պիտի տրուի մօտ օրէն: «Լիուս»-ի համաձայն, վարչապետ Հարիրի յայտնեց, թէ դիւանագիտական նշանակումներուն առնչութեամբ համաձայնութիւն չէ գոյացած, իսկ կառավարութիւնը պէտք եղած աշխուժութեամբ աշխատանքի չէ լծուած եւ հարցերը իրենց ճիշդ հունով չեն ընթանար: «Սաֆիր» օրաթերթը նշած է, թէ նախագահ Լահուտ թերթին ըսած է, որ նախարարաց խորհուրդի նիստը պիտի ըլլայ օրինակելի: Ըստ «Մուսաքալա»-ի, վարչապետ Հարիրի յայտնեց, թէ կառավարութիւնը իր ճիշդ ուղին չէ բռնած տակաւին եւ ժխտած է իր եւ նախագահ Լահուտի միջեւ որեւէ համաձայնութեան գոյացում դիւանագիտական նշանակումներու առնչութեամբ: Իսրայէլեան ուժերուն Բեթղեհէմէն քաշուելուն առնչութեամբ «Անուար» գրած է, թէ Բեթղեհէմ պատասխանուեցաւ իսրայէլացիներին: Ըստ թերթին, պաղեստինեան բանակը կը տարածուի շրջանին մէջ, իսրայէլեան ուժերուն հեռացումէն ետք: Ըստ «Քիֆահ Արապի»-ի, Իսրայէլ համաձայնութեան գոյացումը կախեալ կը նկատէ ինթիֆառայի աւարտին, իսկ Ապու Մապիւն կը խոստանայ յարգել իսրայէլեան կատարողները ձեռքազրկելու իր խոստումը: Թերթը նշած է, թէ Փաուլը յայտարարեց. «Սատտամի անկումը հանգստացուց Իսրայէլի ու Օսցի երկիրները»: «Լիուս»-ի համաձայն, Պուշ շատ ուրախ է եւ իշխանութեան կը խոստանայ ամէն տեսակի օժանդակութիւն: Բեթղեհէմ կը գտնուի իսրայէլեան բռնագրաւումէն դուրս, սակայն իսրայէլացիները շրջապատուած, բան մը, որ կը խանգարէ պաղեստինցիներուն ուրախութիւնը: «Սաֆիր»-ը դիմել տուած է, թէ Ռանթիսի յայտնեց, որ համաձայնութիւնը երկար պիտի չտուէ եւ պաղեստինեան կապակցութիւնները պիտուրիւն համաձայն գտնուեցան պաղեստինցի արդէն իսկ տարապող ժողովուրդին ներքին պայքարի մղձաւանջը խնայելու համար: Իրաքի մէջ տեղի ունեցող իրադարձութիւններուն մասին «Անուար» գրած է, թէ Քարապալախի մէջ երկու աներկեան սպանուեցան, իսկ լարուած մթնոլորտը կը տիրապետէ Ֆայլուծայի մէջ: Ըստ թերթին, աներկեան պիտուրները կը պատմեն իրենց մղձաւանջին մասին եւ կ'ուզեն հեռանալ Պաղեստինէն՝ ամէնէն արագ ժամանակամիջոցին: Թերթը դիմել տուած է, թէ նախագահ Ճորճ Պուշ յայտարարեց, որ Իրաքի մէջ հիմնական եւ արմատական փոփոխութիւններ կատարելու աշխատանքները շատ երկար ժամանակ կը պահանջեն եւ բաւական դժուար են: «Մուսաքալա»-ի համաձայն, նախագահ Պուշ սպասալիք ուղղեց այն բոլոր անձերուն, որոնք կը համարձակին Իրաքի մէջ յարձակումները շարունակել եւ ան իր ուրախութիւնը յայտնեց իսրայէլեան գործընթացի յառաջացումով: Ըստ «Քիֆահ Արապի»-ի, Պուշ կը սպասուի ընդդիմութեան եւ կ'ողջունէ արտաքին օժանդակութիւնները: Պրեմիեր Աներկեանի անկիւնէ թիւով պիտուրներ կը խնդրէ, որպէսզի անկիւն արագ ձեռով կարելի ըլլայ խաղաղութիւն եւ կարգ ու կանոն հաստատել: «Լիուս» գրած է, թէ Պուշ դիմել տուաւ, որ իրաքեան յարձակումները պիտի չընեն աներկեան պիտուրներուն՝ Իրաքի անկիւն շուտ հեռանալու: Ըստ թերթին, Սքոթ Պաղեստինի մէջ հանդիպում մը ունեցաւ Պրեմիերի հետ եւ անկէ խնդրեց, որ արագացնէ իրաքեան ընկերութիւններ յառաջացնելու գործընթացը: «Տիար» նշած է, թէ աներկեան պիտուրներուն մեծամասնութիւնը կը նկատէ, որ Պուշի վարչակարգը սուտ փաստաթուղթեր ներկայացուցած էր Իրաքի դէմ պատերազմի սկսելու համար: Ամերիկացի պատասխանատուներ շեշտած են, թէ անիրաժեշտ է նախ խաղաղութիւն հաստատել, ապա վերաշինել Իրաքը: Այլ լուրերու կարգին «Անուար» գրած է, թէ Ալճերիոյ իշխանութիւնները ապառ արձակեցին Ապպահի Մատանին եւ Ալի Պելիաժը եւ անոնց արգիլեցին քաղաքական որեւէ գործունէութիւն ծաւալել: ՊԱՏԱՐԱՎԳ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՄԱՏՐԱՆ ՄԵՉ - ՊԻՔՅԱՅԱ

Այսու կը հաղորդենք, որ յառաջիկայ Կիրակիէն սկսեալ, 6 Յուլիս, ամէն Կիրակի Սուրբ եւ անճախ պատարագ պիտի մատուցուի նաեւ Պիքֆայայի Ս. Աստուածածին մատրան մէջ:



# ԹՈՒՐՔԻԱ ԿԸ ԽՈՒՍԱՓԻ ԲՆԱԿԱՆՈՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ

Ստորև տրուած հարցազրոյցով Հ. Յ. Դ. Բիրոյի Հայ Ղատի եւ քաղաքական հարցերու կեդրոնական գրասենեակի վերջերս տարածած մամուլի հաղորդագրութեան մասին «Հայոց Աշխարհ» թերթի հարցումներուն կը պատասխանէ գրասենեակի պատասխանատու ընկ. Կիրո Մանոյեան:

ՀԱՐՑՈՒՄ.- Ըստ ձեռքի, ինչո՞վ պայմանաւորուած է բարձրագոյն իշխանութիւններուն դիւանագիտական աշխուժացումը:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Վերջին շրջանին Թուրքիան հանդէս եկած քանի մը նոր նախաձեռնութիւններով Այս քայլերուն նպատակը պատրաստ կը ստեղծէ, թէ Թուրքիա կը պատրաստուի յարաբերութիւնները բնականոնացնել Հայաստանի ու Հայ ժողովուրդի հետ:

Թերեւս նախաձեռնութիւններէն վերջինը Միացեալ Նահանգներու Հայ համայնքին հետ պարբերական հանդիպումներուն ենք:

Անոր զուգահեռ տեղի ունեցան նաեւ արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեանի հանդիպումը իր թուրք պաշտօնակից Ապտիլլա Կիլիլի հետ: Մատուցուած տեղեկութիւններէն կը տեսնուի, որ Հայաստանի արտաքին գործոց երկու նախարարները դրական նկատած են եւ յոյս յայտնած են, որ ան շարունակութիւն ունենայ:

Հ. Յ. Դ. Բիրոյի քաղաքական հարցերու կեդրոնական գրասենեակի յայտարարութիւնը գլխաւորաբար անդրադարձած է Թուրքիոյ այն ջանադրութեան, որով վերջինս Կիլիլիի վարած քաղաքական գործունէութեան հետ հարաբերութիւնները բարձրացնելու մէջ:

Հ. Յ. Դ. Բիրոյի քաղաքական հարցերու կեդրոնական գրասենեակի յայտարարութիւնը գլխաւորաբար անդրադարձած է Թուրքիոյ այն ջանադրութեան, որով վերջինս Կիլիլիի վարած քաղաքական գործունէութեան հետ հարաբերութիւնները բարձրացնելու մէջ:

րի Հայկական Յեղասպանութեան միջազգային ճանաչման ուղղուած աշխատանքները շարունակելէ: Հ. Յ. Դ. Դաշնակցութեան հարցերու կեդրոնական մէջ կուսակցութեան տեսակէտին վրայ աւելցուած յարաբերութիւնները մը չկայ: Ասիկա կը յիշեցնէ, որ Հ. Յ. Դ. Դաշնակցութեան կեցուածքը անփոփոխ է այս հարցին մէջ, ինչպէս նաեւ կոչ մըն է հայկական կազմակերպութիւններուն եւ կառույցներուն ըլլալու զգաստ, չտարուելու թրքական խողերէն եւ չիյնալու Թուրքերու լաւած թակարդին մէջ: Իրողութիւնը այն է, որ Թուրքիոյ բանակցութիւնները պիտի չսահմանափակուին Միացեալ Նահանգներու Հայ համայնքներուն հետ հանդիպումներով, այլ յառաջիկային պիտի շարունակուին եւ ընդհանուր Հայ համայնքին հետ եւս:

Վստահ ենք, որ զեղասպանութեան հարցին շուրջ իրենց դիրքորոշումը չեն փոխեր նաեւ Հայաստանի իշխանութիւնները եւ պիտի շարունակեն պնդել յարաբերութիւնները առանց արտաքին գործոց երկու նախարարները դրական նկատած են եւ յոյս յայտնած են, որ ան շարունակութիւն ունենայ:

Հ. Յ. Դ. Բիրոյի քաղաքական հարցերու կեդրոնական գրասենեակի յայտարարութիւնը գլխաւորաբար անդրադարձած է Թուրքիոյ այն ջանադրութեան, որով վերջինս Կիլիլիի վարած քաղաքական գործունէութեան հետ հարաբերութիւնները բարձրացնելու մէջ:

Պ.- Կիլիլիի հետ հանդիպումին առաջ ալ, ետքն ալ պարզ էր, որ Հայաստանի իշխանութիւնները չեն փոխած իրենց դիրքորոշումը այս հարցին մէջ: Բնական է նախապայմաններով յարաբերութիւններու բարելւումը: Սակայն հարցը նաեւ իր հակառակ Հայաստանի հետ յարաբերութիւններուն ընկալման հարցն է: Առանց այս վճարական քայլին անհեթեթ է խոսիլ յարաբերութիւններու ընկալման հարցին մասին:

Անշուշտ պէտք պիտի ըլլայ ճշդել երկկողմանի յարաբերութիւններու ընկալման քայլերուն մտքով թուրքերու Բայց նաեւ պէտք է ճիշդ լըրը: Այս իմաստով, իրօք, խաբուելու վտանգ կայ, որովհետեւ կը ստեղծուի այն պատրաստը, թէ Թուրքիան բան մը փոխած է իր կեցուածքին մէջ:

Իրողութիւնը, սակայն այն է, որ Թուրքիոյ ջանքերը նպատակ ունին Միացեալ Նահանգներու ու Եւրոպայի մէջ տպաւորութիւն ստեղծել, թէ Թուրքիա նախաձեռնած է եւ շահագրգիռ է լուծելու Հայաստանի առնչուող թուրք խնդիրները: Իրողութիւնը այն է, որ ընդունուած բնականոնացումը, եւ ընդհանուր Հայ համայնքի հետ հարաբերութիւնները Հայաստանի հետ, եթէ հայկական կողմը հրաժար-

կան զեկուցումներ պիտի ներկայացուին, որոնց մէջ պիտի գնահատուին Թուրքիոյ ձեռնարկած քայլերը՝ Քոփենհագենի փաստաթուղթին մէջ առաջարկուած պահանջները կատարելու մասին: Թուրքիոյ պարագային այդ պայմաններէն մէկն է յարաբերութիւններուն բարելւումը Հայաստանի հետ: Թուրքիոյ վրայ ճնշում կը բանեցնեն նաեւ Միացեալ Նահանգներ, որովհետեւ անոնց աշխարհաքաղաքական շահերը նոյնպէս կը թելադրեն, որ Թուրքիա Հայաստանի հետ բնականոն յարաբերութիւններ հաստատէ:

Իրականութեան մէջ, սակայն, Թուրքիան երբեք ալ չէ ձգտած Հայաստանի հետ իր սահմանը բանալ, այլ միայն այդպիսի տպաւորութիւն կ'որոշէ ստեղծել միջազգային հանրութեան մօտ:

Հ.- Թուրքիոյ հետ սահմաններուն բացումը ինչպիսի քաղաքական եւ տնտեսական հետեւանքներ կրնայ ունենալ:

Պ.- Սահմաններու բացումը, ինքնին, երբեք չի նշանակեր տնտեսական յարաբերութիւններու հաստատում: Այսօր սահմանը փակ է, սակայն, Թուրքիոյ հետ անուղղակի տնտեսական յարաբերութիւններ կան: Այստեղ առանձնապէս նորոգութիւններ պիտի չըլլան: Այն առեւտուրը, որ կը կատարուի Վրաստանի միջոցով, հաւանաբար պիտի դառնայ ուղղակի: Բայց երկու երկիրներուն միջեւ բնականոն տնտեսական յարաբերութիւններ չեն կրնար գոյութիւն ունենալ այնքան ժամանակ, մինչեւ որ չհաստատուին դիւանագիտական յարաբերութիւններ: Մինչդեռ Հայ-թրքական բանակցութիւններուն օրակարգին մէջ տակաւին դիւանագիտական յարաբերութիւնները հաստատուելու խնդիր չի գրուել:

Հ.- Այս խնդիրը, անշուշտ, կրնայ լուծուի գտնել միայն Հայաստանի իշխանութիւններուն հետ բանակցութեան իրրեւ արդիւնք: Ներկայիս Հ. Յ. Դ. համաձայնական կառավարութեան մաս կը կազմէ: Կառավարութեան ծրագրի մէջ այս հարցին լուծման որոշակի հիմնադրոյթներ ամրագրուած են:

Պ.- Ազգային անվտանգութեան ու արտաքին քաղաքական խնդիրները, յայտնի է, կը հետապնդուին ո՞չ միայն կառավարութեան, այլ նաեւ երկրի նախագահին կողմէ: Ըստ Հ. Յ. Դ. Դաշնակցութեան դիրքորոշումին, անհրաժեշտ է, որ ազգային կարեւորութիւն ունեցող պայմանները ընդհանուր կուսակցութեան խորհուրդին մէջ: Դժբախտաբար, այս մարմինը տակաւին ստեղծուած չէ:

Քաղաքական համաձայնութեան յուշարժիւրի մէջ մենք արդէն իսկ հաստատած ենք այն միտքը, որ սկզբունքային հարցերը պէտք է լուծուին միջկուսակցական քննար-

կուսներու իրրեւ արդիւնքի յայտ եկած համաձայնութեան հիման վրայ: Եթէ հարցին շուրջ համաձայնութեան անդամ կուսակցութիւններէն որեւէ մէկը իր սկզբունքները ոտնահարուած նկատէ, անշուշտ կրնայ դուրս գալ համաձայնական կառավարութեանէն: Պատճառ չկայ բացառելու, որ Հայ-թրքական յարաբերութիւնները սկզբունքային հարցերէն մէկն է:

Ես լիայոյս եմ, որ այս հարցին մէջ համաձայնա-

կան կառավարութեան անդամ կուսակցութիւններուն միջեւ համաձայնութիւն ձեռք կը բերուի: Պէտք է մտնել, որ ժամանակին այս կուսակցութիւնները հանդէս եկած են Հայ-թրքական յարաբերութիւններուն վերաբերող միացեալ յայտարարութեամբ:

«ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀ»

(Արեւմտահայերէնի վերածուած)

## ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՔՈՒԷԾԻ 80ԱՄԵԱԿԻ ԱՄԱՎԵՐՁԻ ՀԱՆԴԵՍ



Քաղաքի Հայ աւետարանական քոլէճի ամառվերջի հանդէսը այս տարի դարձրին 80ամեակը ըլլալով՝ փառաշուք կերպով տեղի ունեցաւ 27 Յունիս 2003ի երեկոյեան ժամը 6:30ին, դպրոցի շրջափակին մէջ:

Հանդէսը սկսեւ շրջանաւարտներու եւ դպրոցի կրթական մշակներու հանդիսաւոր մուտքով, որոնց յարգեց Լիբանանի եւ Հայաստանի քայլերգներու յորդանակայ ունկնդրութիւնը:

Հայ աւետ. Ա. եկեղեցւոյ հովիւ վեր. Յովհ. Սվաճեան Աստուածաշունչէն ընթերցում ըրաւ եւ աղօթք մատուցեց, ապա Մեծի Տանն կիրիլիոյ կաթողիկոսարանի դիւանապետ Միշիկ Տէտէեան, դպրոցի 1980ի շրջանաւարտներէն, յատուկ խօսք ուղղեց:

Միտքէն ետք նախակրթարանի Չ. դասարանի աշակերտները արտասանեցին Արարատին նուիրուած քերթըածններէ հատուածներ, իսկ դպրոցի «Արեւիկ» ձայնային համույթը երգեց «Ի Ջէն հայեր» եւ «Երգ խաղաղութեան» երգերը խմբավարութեամբ Գրիգոր Նաճարեանի: Ապա կատարուեցաւ առաջնութիւն ստացողներու մրցանակաբաշխութիւնը, որուն յարգեցին աւարտականներու ուղերձները՝ Յովակ Թորոսեանի (հայերէն) եւ Սերուժ Չարխրտեանի (արաբերէն):

Դպրոցի տնօրէն Չաւէն Մսերլեան բաժնեց վկայա-



կանները նախակրթարանի Չ. դասարանէն՝ Արի Ահարոնեանի, Մարտո եւ Մարթո Իքնատոսեաններու, Արթուր Ուրեանի, Թադուհի Յովհաննէսեանի, Վարդէնի Պոյաճեանի ժան Տեմիրճեանի, Հրայր Քեստէնեանի եւ Հայկ Օհանեանի եւ Ժ. Գ. դասարանէն՝ Շուշան Արթիւեանի, Յովակ Թորոսեանի եւ Սերուժ Չարխրտեանի:

Տնօրէնը յայտնեց, թէ հաստատութեան երկարամեայ ուսուցչուհիներէն Լորիս Տօնապետեան հանգստեան կոչուելու առիթով երկարամեայ ծառայութեան շքանշան կը ստանար եւ խնդրեց եկեղեցւոյ հովիւէն՝ յանձնել շքանշանը: Շքանշանի տուչութենէն ետք տնօրէնը կատարեց հուսկ բանքը: Չ. Մսերլեան շնորհ զրաւ շրջանաւարտներուն փոխանցուած ջահին առկայ յանգստեան կարեւորութեան:

Հուսկ բանքէն ետք Շուշան Արթիւեանի թաւուրեւի վրայ նուագեց Ալեքսանտր Յարութիւնեանի «Էքսպրոմտ»ը զանազակ ընկերակցութեամբ Վարդան Յակոբեանի: Ապա Հայ աւետ. Ա. եկեղեցւոյ խնամակալութեան ատենապետ զոկու. Երուանդ Քասաբեկի տուաւ օրուան պատգամը՝ շնորհ զնելով Հայ աւետ. քոլէճի զինահատելի ծառայութեան վրայ եւ կտրուկ կերպով հերքեց գուժական լուրերը, թէ դպրոցը պիտի փակուի:

Հանդիսութիւնը փակուեցաւ օրհնութեան աղօթքով:

«ԱՉԴԱԿ»Ի ՀԵՌԱՉԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ  
«ԱՉԴԱԿ»Ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:

## ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԲԱՐՍԵՂ ԿԱՆԱՉԵԱՆ ԵՐԱՇԵՏԱԿԱՆ ԲՈՒՄԻՍ

### ԹԱՄԱՐ ԻՍԿԵՆԵԱՆԻ ՈՂՋՈՒՆԵԼԻ ՆՈՒԱՃՈՒՄԸ



Համազգայինի Բարսեղ Կանաչեան երաժշտանոցի սան, սրնգահար Թամար Իսկէնեան փայլուն նուաճում մը արձանագրեց աշխարհահռչակ երաժիշտներ Տանիէլ Պարենպոյմի եւ Էտուրտ Սէլիտի հիմնադրած միջերկրականեան երկիրներու երիտասարդ երաժիշտներու ամառնային նուագախումբի մաս կազմելու մրցանակը չահելով:

Պերլինի եւ Շիքակոյի սիմֆոնիք նուագախումբերու առաջատար երաժիշտներէ կազմուած դասական կազմ մը, անցնող ամսուան ընթացքին շրջելով Լիբանան, Սուրիա, Իսրայէլ, Եգիպտոս, Կիպրոս, Յորդանան եւ միջերկրականեան այլ երկիրներ, ունկնդրեց խոստմնալից պատանի եւ երիտասարդ ուսանողներ, որոնցմէ ընտրեց 60 հոգի, որոնք ամբողջ Օգոստոս ամսուան ընթացքին նուագախումբ կազմելով պիտի շրջագային եւ յայտնեն պիտի ունենան Սպանիոյ, Անգլիոյ, Գերմանիոյ եւ Յիւստայի մէջ: Անոնք հնարաւորութիւն պիտի ունենան նաեւ դասեր առնելու Եւրոպայի առաջատար երաժիշտներու կողմէ:

Վերոյիշեալ խմբակին մաս կազմելու համար Լիբանանէն ընտրուած են տարբեր նուագարաններ նուագող ուսանողներ, որոնց շարքին՝ Ազգ. Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան քոլէճի ուսանող Թամար Իսկէնեան: Ան սրնգահարի իր ուսումը սկսած է չորս տարի առաջ, Համազգայինի Բարսեղ Կանաչեան երաժշտանոցի քոլէճին մէջ, աշակերտելով Չարսեղ Քէլիշեանի, եւ տարիէ մը Վեր Լիբանանի պետական երաժշտանոցին մէջ կ'աշակերտէ Մաթէ Զիկէթի:

### ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ԳՐՈՂՆԵՐՈՒ ՀԱՄԱԽՄԲՈՒՄԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Գրիգոր Նարեկացիի «Մատեան Ողբերգութեան»ի 1000ամեակին առիթով լիբանանահայ գրողներու համախմբումի 5 Յունիս, Հինգշաբթի, 2003ի հանդիպումը նուիրուած էր անոր քննարկումին: Այս մասին գեղարվեստական հանդէս եկաւ դոկտոր փրոֆ. Ամերիկեան համալսարանի դասախօսուհի Սեդա Պարսումեան: Տատույեան: Ան Գրիգոր Նարեկացիի «Մատեան Ողբերգութեան» եւ ժամանակաշրջանին լուստեղեկի եւ մօտէն ուսումնասիրողի հանգամանքով ներկայացուց իր Նարեկացիին, որ ցարդ ընդունուած վերլուծումներէն տարբեր ըլլալուն, վիճելի տեսակետներ կը բովանդակէր:

Սեդա Տատույեան - Պարսումեանի հայեցողութեամբ «Մատեան Ողբերգութեան»ը իր ժամանակաշրջանի արտայայտութիւնն է: Ժամանակաշրջան մը, որ կը արտայայտէ լիբանոնահայ գրականութեան Անի քաղաքի քաղցրեցումը՝ գեղարվեստի եւ ազգայնապաշտպանական շարժումներու, - Թոնգրակեան, Պաղկեան, - պայքարներով: Իր ժամանակի մեղքերու տիրապետութեանէն ձեռքազատուելու, - առանց բարձր միջնորդութեան, - եւ ուղղակի Աստուծոյ հետ մեծախօսութեամբ փրկուելու միջոցին դիմած է Գրիգոր Նարեկացի իր «Մատեան Ողբերգութեամբ» որ միջնորդ ժամանակ իր ժամանակաշրջանի մշակոյթին եւ արուեստին (արաբական հակումով) արտայայտութիւնն է:

Ուսումնասիրական որոշ տեսակետներու վրայ հիմնուելով գեղարվեստի Նարեկացիին դուրս բերաւ «Միաբիթ»ի մեծակեցաց աղօթողի պատեանէն եւ զայն տեղադրեց մարդկային շրջապատին մէջ, իբր մարդ տարող հետ ապրած ըլլալու ընկերային յարաբերութիւններով: Եկեղեցիէն բանադրուած իր հօր եւ հօրեղբոր ուղղութեան որպէս հետեւող Գրիգոր Նարեկացիին եւ հերետիկոսի մեղադրանքին արժանացած ըլլալը նշեց, ներկայեւ զարմանք պատճառով համարձակ գաղափար մը զարգացումով:

Իր արժեքներուն անդրադառնալով կատարեց կարգ մը հաստատումներ:

Հայ քննադատութեան առաջին մեծ բանաստեղծն է: Քննադատական մեծութիւնը բացի «Մատեան Ողբերգութեան» իր տաղերով եւ ցոյցաւածնէն: Այս տեսակետով ալ իր տեղը կը յատկանշուի նորարար յուսալից զարգացումով: Բանաստեղծական նոր ուղղութեան մը ստեղծմամբ: Ուղղութիւն մը, որ բոլորովին խոսուած չէր ժողովրդական մշակոյթին, յանգիւրդ, չափերու գործածութեան արաբական ազդեցութեամբ զայն անջնջելով Աւրաքանակի հետ: Այդ ազդեցութեան անդրադարձը համարեց պատճառաւոր լեզուի, մակրոյիներու առատ գործածութեամբ, - արաբական արեւելեան ոճի առկայութիւնը: Գրիգոր Նարեկացիին կը կատարուի բանաստեղծական լեզուի նորարարութեան: Իր գործածած բառերուն 2000ը մօտ իրմէ առաջ գործածուած չէ:

Գրիգոր Նարեկացիին կրօնական մտածողութեան մէջ, որ ընթացիկ առումով քրիստոսաբանութիւնն է, մարդ կ'աստուծանայ, Աստուծոյ կը մարդանայ: Լիբանանահայ Գրողներու Համախմբումի Եռանդամ քարտուղարութեան կազմէն Պէպօ Միմոնեան, որ կը վարէր հանդիպումը, խօսք տուաւ ներկայ գրողներ յայտնեցին: Կարծիքներ, որոնք շատ մը կէտերու մէջ հաշտ չէին գեղարվեստի խմբերուն հետ:

### ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ԳՐՈՂՆԵՐՈՒ ՀԱՄԱԽՄԲՈՒՄԻ ԲԱՐՍԵՂ ԿԱՆԱՉԵԱՆ ԵՐԱՇԵՏԱԿԱՆ ԲՈՒՄԻՍ





# Մեկսիսի Միսուսոգուբեանի Մուկաս

## ՏԱՐԱԿԱՐԾՈՒԹԻՒՆԸ «ԱՆԲԱՐՈՅՈՒԹԻՒՆ» Է

ՇՈՆ ՓԵՆ ԱՍԵՐԻԿԵԱՆ ՄԱՍՈՒԼԻՆ ՄԵՋ ՆԱԽԱԳԱՐ ՊՈՒՅԸ ԲՆՆԱԳԱՏՈՂ ՍԱԿԱԲԱԾԻ ԱՆՁԵՐԵՆ Է: ԱՆ 125 ԸԱՅԱՐ ՏՈՒՐ ԿՃԱՐԱԾ Է ԱՅՊ ԱՌԱՆՁՆԱՅՆՈՐԸՈՒՄԻՆ ԸԱՄԱՐ: «ՏԸ ԿԱՐՏԻՆ» ԿԸ ԳՐԷ:



Ամերիկացի դերասան և քննադիր Շոն Փեն վերջերս ամբողջ էջ մը գնեց «Տը Նի Եորը Պայմագ» քերթիմ մէջ, ցախագահ Պուշի վերածնունդին դէմ յօդուած մը հրատարակելու համար: Ան միայն այս ձեւով յայտնած է լսելի դարձնել Ամերիկայի մէջ ժողովրդավարութեան վերակենդանացումի իր կողմը:

Թերը կը գերազանցեն բրիտանական օրաթերթերը, սակայն անոնք ետ կը մնան կարծիքներու այլազանութեան եւ իրենց քաղաքական կառոյցներուն դէմ մարտահրաւէր ուղղելու դիտանկարներէն: Վիճելի նիւթ է, թէ ամերիկեան մամուլը որքանով կ'արտացոլէ իր ընթացիկներուն մտածումներն ու արժեքները: Ամերիկացիներուն մեծամասնութիւնը զօրակցեցաւ Իրաքի դէմ պատերազմին: Այսօր Հարցախոյզը ցոյց կու տայ, թէ ամերիկացիներուն 55 առ հարիւրը կը վաւերացնէ նախագահ Պուշի քաղաքականութիւնը Իսրայէլի եւ պաղեստինցիներու հար-

ցին նկատմամբ եւ երկու երրորդը կը հաւատայ, թէ Իրաքի դէմ պատերազմը սատարած է ահաբեկչութեան դէմ պայքարին: Նախագահ Պուշի հետ ամէնէն աւելի կ'առնչուին երեք բառեր՝ «անկեղծ», «լաւ» եւ «ղեկավարութիւն»:

Այսուհանդերձ գոյութիւն ունի ընդդիմադիր որոշ փոքրամասնութիւն մը, որ շատ փոքր է հոսանք դառնալու համար, սակայն շատ մեծ՝ լուսանցքային նկատուելի: Այս հատուածը «ամբարտաւան» կ'որակէ նախագահ Պուշը: Ամերիկացիներուն 25 առ հարիւրը կը հաւատայ, թէ Իրաքի մէջ կայունութիւն հաստատելու ճիգերը ճախող կ'ընթանան, իսկ աւելի քան 30 առ հարիւրը կը հաւատայ, թէ նախագահ Պուշի վարչամեքենան գերազանցատեմ է Իրաքի ունեցած զէնքերը, որպէսզի մարդիկ աշխկցին Իրաքի դէմ իր պատերազմին: Թէ էն նման տեսակէտներ չեն լսուիր պետական մակարդակի վրայ, սակայն անոնք կ'իշխեն տեղական տար վէճերու մէջ, ամբողջ երկրին տարածքին:

Միացեալ Նահանգներ բացառութիւն չեն այս առումով: Հիւսիսային Իրլանտայի հարցերուն խորթափանց վերլուծումը բրիտանական մամուլին մէջ է, որ կը գտնենք: Նմանօրինակ քննադատութիւններ կարելի է ուղղել Ֆրանսական լրատուութեան դէմ՝ Ալլեբրիոյ պատերազմին առնչութեամբ: Հզօր երկիրներու մէջ քաղաքական կառոյցներ հազուադէպօրէն ճշմարտութիւնը կ'ըսեն իշխող ուժին վերաբերեալ, եւ անոնց լրատուամիջոցները յաճախ գոհունակութեամբ կը մասնակցին «դաւին»: «Միայն երբ առիժները սկսին պատմութիւն գրել, այն ժամանակ որոտղները կը դարձնեն հերոս ըլլալէ», կ'ըսէ Կարիկեան առածը:

Սակայն Միացեալ Նահանգներ կը տարբերին իրենց լրատուական մարզին բնոյթով եւ անոր առնչուած վէճերով: Ամերիկեան լրատուական մարզին մէջ կ'իշխեն քանի մը ընկերութիւններ: Օրինակ՝ «ԱՕԼ Թայմ Ուորլը» սեփականատէն է «Թայմ», «Ֆորչըն», «Լայֆ», «Սփորթս Իլասթրէյթը», «Սի. Էն. Էն.», «Քամրտի Սենթ-

ըլ», «Ուորլը Պրատըր ֆիքշըրը» եւ «Պլէք Ինթըլիճնմընթ Թեթիֆթըն» լրատուամիջոցներուն: Ամերիկայի Հաղորդակցութեան դաշնակցային յանձնաժողովը Մայքըլ Փատուրի (Քոլին Փատուրի որդին) գլխաւորութեամբ պիտի դիւրացնէ սեփականութեան օրէնքները, ինչ որ կը նշանակէ, թէ լրատու գործակալութիւններու միացումը եւ անոնց ընկերակցող ընտրութեան պահանջ պիտի չեղարկուի: Եւ երբ կը մղուի անպիտան պատերազմ մը թշնամի մը դէմ, որ պետութիւն չունի (ահաբեկչութիւնը զագութիւն չունի), անտեսանելի է (ոե՛հ մէկը կրնայ ահաբեկչը ըլլալ) եւ զայն կարելի է գտնել ամէն տեղ, այն ատեն լրատուամիջոցներու կողմէ խեղաթիւրումը հաւանականութիւնը կը դառնայ վարակիչ եւ տեսական:

Տեղեկատուական մարզին սպականութեան խուսափելով՝ բազմաթիւ ամերիկացիներ կը դիմեն լրատու օտար աղբիւրներու: Իրաքի պատերազմին առաջին շրջա շարքներուն «Պի. Պի. Սի.»-ի պատկերասփիւռի լուրերուն հետեւող ամերիկացիներուն թիւը աւելցաւ 28 առ հարիւր համեմատութեամբ, եւ այս կայանին Պաղտատի թղթակիցը՝ Ռակի Օմար վերածուեցաւ սեռական իր պատկանելիութիւնը խորհրդանշող կուռքի: Մինչ այդ «Պի. Պի. Սի.»-ի համացանցի կայքը եւ «Տը Կարտիլը» թերթին նման յառաջիմական աղբիւրներու կայքերը այցելողներուն թիւը մեծ մագլցում արձանագրած է Սեպտեմբը 11-էն ի վեր:

Ամերիկեան մամուլին պարագային հարցը այն է, թէ տարակարծութիւնը տարօրինակ կերպով կը դրսեւորուի, այլ այն, թէ անիկա երբեքից է կը զգացնէ՞ ինքզինք: «Պատերազմը կասեցնելու համար ցոյցի չեն մասնակցիր, երբ Սատուած Հիւսէյն տակաւին կ'իշխէ, որովհետեւ այդ պարագային անոր բռնատիրութիւնը պիտի ամրապնդուի», կը վիճի ազատական թերթի մը խմբագիրներէն Մայքըլ Վալըրը: Այս թերթը տարուան սկիզբը յայտարարած էր, թէ՛ «բաց է ամուր տեսակէտներու բախումին դիմաց»: Թերթին անո՞ւնը. «Տարակարծութիւն»:

## ԳԱՂԱՓԱՐԻ ՈՍՏԻԿԱՆՆԵՐԸ ՆԵՐՈՒՄ ԷՆ

ՃՈՐՃ ՕՐՈՒԷԼԻ ԵՆՈՒՆԴԵՆ ԸԱՐԻՒՐ ՏԱՐԻ ԵՏԶ ԱՆՈՐ ԿԱՐԳ ՍԸ ԳԱՌԱՓԱՐՆԵՐԸ ԱՆՆԱԳԱՏՆԵԼՈՒ ԱՍԻՏԱՆ ԿԸ ԳՐԷ:

Եթէ ձորձ Օրուէլ պատկերասփիւռի կայանները դարձնէր այս օրերուն, ան հաւանաբար իր պեխերը պիտի բռնէր եւ մտածէր, թէ ինչպէս իր ստեղծած «Պիկ պրատըր» հասկացութիւնը կը գործածուի իբրեւ վերնագիրը իրականութեան վրայ հիմնուած պատկերասփիւռի յայտագիրներուն շարքի մը, որուն մէջ 10 կամ 15 ամերիկեան 24 ժամ պիտի ապրին նկարահանումի 28 գործիքներու զննող ոսպնեակին տակ:

«Պիկ պրատըր» հասկացութիւնը կու գայ ձորձ Օրուէլի մարդկատիրական ընկերութեան վերաբերող վէպէն: Անիկա պարզապէս այլ վերնագիր մըն է պատկերասփիւռի յայտագիրներու ցանկերու մէջ եւ այլ բառ մը՝ անգլերէն բառարաններու, նոյնիսկ երբ շատեր կը կարծեն, թէ Օրուէլի գաղափարները այլեւս ժամանակավրէյ պ են:

Օրուէլի ծննդեան հարիւրամեակին առիթով աշխուժ բանավէճ մը կը զարգանայ անգլիացի վիպագիրին գաղափարներուն շարունակուող այժմեականութեան վերաբերեալ: Մինչ կարգ մը ակադեմիկաններ կ'ըսեն, թէ Օրուէլի նախատեսութիւններուն իրականացումը կարելի է գտնել ամէնօրեայ լուրերու մէջ, պետական պատասխանատուներու յետին նպատակներուն եւ իրականութիւնները խեղաթիւրելու անոնց ընթացքին մէջ, անդին ուրիշներ կը հաւատան, թէ Օրուէլի նկատմամբ ժամանակակից ակնարկութիւնները անտեղի են եւ հնարոյր:

Ասիկա նիւթն էր վերջերս Մասաչուսէցի Ուեյմսի Բալէնի մէջ ձորձ Օրուէլի նուիրուած համագումարին, ուր ակնաւոր մասնագէտներ եւ գրագէտներ հաւաքուեցան ուսումնասիրելու համար հեղինակն ու անոր գործերը:

Առաւելաբար մարդկային ազատութեան վերաբերող իր կարծիքներով ծանօթ Օրուէլ ընդհանրապէս կը նկատուի 20րդ դարու ամէնէն ընկերաքաղաքական մտածողներէն մէկը:

Այսուհանդերձ Օրուէլի ստեղծած արտայայտչաձեւերը կամ հասկացութիւնները խոսակցութեան մէջ գործածելը կրնայ բան մը պակասցընել անոր մտածումներուն կարեւորութեան: Համագումարին զեկուցաբերներէն Քրիսթաֆըր Հիլինգ ըսած է, թէ «բոք փոլիս» (գաղափարի ոստիկաններ) հասկացութիւնը եւ նման արտայայտութիւնները յաճախ կը գործածուին անտեղի կերպով:

Մասաչուսէցի համալսարանէն Տաֆնէ Փաթայի համաձայն, ասիկա հետեւանք է անկախ միտքի բացակայութեան: Օրուէլ յաճախ կը մէջբերուի վէճերը գրագրացնելու համար, առանց խոր վերլուծումներ կատարելու: «Անկախ մտածողութիւնը միակ բանն է, որ մեզ դուրս պիտի բերէ մտաւորական այն խառնիճաղանձէն, որուն մէջ ինկած ենք», կ'ըսէ «Տի Օրուէլ միսթիք: Է սթատի ին մէյլ յայտնողճի» գիրքին հեղինակը: Այսուհանդերձ շատեր կը հաւատան, թէ ժա-

ճՈՐՃ ՕՐՈՒԷԼԻ ԵՆՈՒՆԴԵՆ ԸԱՐԻՒՐ ՏԱՐԻ ԵՏԶ ԱՆՈՐ ԿԱՐԳ ՍԸ ԳԱՌԱՓԱՐՆԵՐԸ ԱՆՆԱԳԱՏՆԵԼՈՒ ԱՍԻՏԱՆ ԿԸ ԳՐԷ:



Առաւելաբար մարդկային ազատութեան վերաբերող իր կարծիքներով ծանօթ Օրուէլ ընդհանրապէս կը նկատուի 20րդ դարու ամէնէն ընկերաքաղաքական մտածողներէն մէկը:

Մասաչուսէցի համալսարանէն Տաֆնէ Փաթայի համաձայն, ասիկա հետեւանք է անկախ միտքի բացակայութեան: Օրուէլ յաճախ կը մէջբերուի վէճերը գրագրացնելու համար, առանց խոր վերլուծումներ կատարելու: «Անկախ մտածողութիւնը միակ բանն է, որ մեզ դուրս պիտի բերէ մտաւորական այն խառնիճաղանձէն, որուն մէջ ինկած ենք», կ'ըսէ «Տի Օրուէլ միսթիք: Է սթատի ին մէյլ յայտնողճի» գիրքին հեղինակը: Այսուհանդերձ շատեր կը հաւատան, թէ ժա-

գուշակեան Ամերիկայի արտաքին քաղաքականութեան մտահոգութիւն պատճառող երեւոյթներ, բարձր կ'արձագանգեն Միացեալ Նահանգներու մէջ, ինչպէս կ'ըսեն կարգ մը մասնագէտներ: Քաղաքային ազատութեան ջատագովներու մտահոգութիւն կը պատճառէ «Փեթրիթ քէթը»-ի յարձակողական բնոյթը եւ՝ հաւանական «Փեթրիթ քէթը 2» մը, որ պիտի ընդարձակէ պետական հսկողութեան սահմանները: Օրուէլ իր գրութիւններուն մէջ կ'ընդունի, թէ «անվտանգութեան համար ազատութիւն գիշերը մահուան թակարդ մըն է», ինչպէս կ'ըսէ Հիլինգ, որ Միացեալ Նահանգներու անվտանգութեան միջոցառումները կը նկատէ «մոլորեցնող փորձութիւն»:

Այսուհանդերձ Օրուէլ պատկերացուցած է անվտանգութեան հսկելու ծառայող արհեստագիտութիւն մը, որ արդէն իրականութիւն է. գայն կը տեսնենք փողոցներուն անկիւնները, գրադարաններու եւ գրասենեակներու միջոցներուն մէջ, ինչպէս կ'ըսէ յօդուածագիր Եան Ուիլիամսը եւ կ'աւելցնէ. «Երբ Օրուէլ իր երեւակայական աշխարհին մէջ ստեղծեց հսկողութեան ծառայող ելեկտրոնիք պաստառ մը, ան արհեստագիտական մեծ ուսումնառումը կատարեց մութիւն մէջ, իսկ այսօր պատկերասփիւռի պաստառը գոյութիւն ունի»:

Թէեւ այս բոլորը տրամաբանական վտանգներ կը ներկայացնեն մարդկային ազատ ընկերութեան համար, սակայն այլ մասնագէտներ կը վիճին, թէ ներկայ պայմանները շատ հեռու են Օրուէլի նախագրուած յարցումներէն: Ընկերաբան Տենիս Ռոնի կ'ըսէ, որ ամբողջատիրութեան հասկացութիւնը յաճախ սխալ կը գործածուի: Ասիոյ, Աֆրիկայի եւ Միջին Արեւելքի մէջ ընդ վարչակարգը «դժուար թէ համագոր են» նախկին ինքնակարգային Միութեան եւ նացիական Գերմանիոյ վարչակարգերուն, ինչպէս ըսած է ան համագումարին առիթով:

«Բոլոր բռնատիրութիւնները եւ մենատիրութիւնները կարելի չէ ամբողջատիրութիւն կոչել: Ինչ որ հակաժողովրդավարական է, զայն կը ներկայացնենք յոռեգոյն պատկերով, - կ'ըսէ Ռոնի: Ամբողջատիրութիւնը քեզի թոյլ չի տար հաւաք մը թէյ խմել: Անիկա կը թափանցէ կեանքի իւրաքանչիւր երեւոյթին մէջ»:

Այսուհանդերձ Հիւսիսային Քորէայի մէջ, ուր քաղաքացիներ ամէն օր քարոզչութիւն կը չնչն, ոմանք կ'ըսեն, թէ պայմաններ անժրտախորհրէ «օրուէլիան» է: «Կեանքիս մէջ առաջին անգամ ըլլալով յոգնեցայ «օրուէլիան» բառէն, - կ'ըսէ Հիլինգ՝ ակնարկելով Հիւսիսային Քորէա իր այցելութեան: - Խնտութիւններուն մէջ սպաննք չկար, օրաթերթերուն մէջ լուր չկար»:

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Ս. Նշան Մայր եկեղեցու կր ճուրղերը՝ Լուսին և Եագույ Ուստագարայեաններու մահուան յիշատակին, տէր եւ տիկին Զաւէն Դարիպեան 25,000 լ.:

ՄԵՍՐՈՊԵԱՆ ԱՐՈՒԵՍԻՑ ԿԱՐԺԱՐԱՆ

Ամառնային օգտակար ժամանց Դաստիարակչական համելի ծրագիր



5-էն 13 տարեկան պատանիներու համար

14 Յուլիսէն մինչեւ 5 Սեպտեմբեր

Արձանագրութիւնները կը սկսին 9 Յունիսին

Ծրագրի մանրամասնութիւնները ONLINE www.mesrobian.com

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ՆՇԱՆ ՍԱՐԳԻՍԵԱՆԻ մահուան Ա. տարեկիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 6 Յուլիս 2003, Ամբիկիայի Ս. Գրիգոր Լուսավորչի Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՊԻԶՅԱՅԱ ՊԻԶՅԱՅԱ ԿԵՐԻ ԳԸՎԸՐԵԱՆԻ մահուան Ա. տարեկիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 6 Յուլիս 2003, Պիքֆայայի Ս. Աստուածածին մատրան մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԽԱԹՈՒՆ ԹՈՐՈՍԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 6 Յուլիս 2003, Նոր Մարաշի Ս. Զառանգի Մանկանց եկեղեցու մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5478 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

11x11 grid for crossword puzzle

- Վատնուժ, մաշուժ - Անանուխ: 2. Վահան - Օղակ: 3. Քուղ, առասան - Ան-միջապէս: 4. Կեռ - Անծին այծ - Կրկնուժ բաղաձայններ: 5. Ռամկօրէն՝ այր՝ - Ըն-տանի անասուններ բուժա-նելու հողային կալուած: 6. Մեծ հողատէր - Երկար-բախտութեան միտար: 7. Աղեկատ - Հայկա-կան ամիսներու ժԸ. օրը: 8. Հոյլ - Վայրի ձար-խոտ: 9. Ժայթքում - Արեւել-եան տիտղոս: 10. Յուցական դերա-նուն - Արական օտար անուն: 11. Որ - Գեղամ Սարեա-նի երկերէն:

Թի 5477 ԽԱՉԲԱՌԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ

տիկին Խաճկ Թահմազեան 100\$ եւ տիկին Սոնա Զիրքեան 50,000 լ.:

ՍԱԿԱՐԱՆ

Table with 2 columns: Name and Amount

ՏԻՆՆԻ ԿՐԱՆԻ ԱՍՏՂԵՐԸ

ԽՈՅ (21 Մարտէն 20 Ապրիլ) Զեր կորով բարձր է, տրամադրութիւնը՝ բնական: Կ'ուզէք ձեռնարկել նոր գործունեութիւններու՝ ար-ուեստի կամ մարզական մարզերու մէջ: Օրը պիտի անցնի զուարթ ու օգտակար:

ՅՈՒՆԻ (21 Ապրիլէն 21 Մայիս) Առանց մասնաւոր ճիգ թափելու՝ ձեր ձայնը լսելի դարձնելու համար պիտի հաւաքէք բուժներուն մեծ մասը: Այս միտածայնութիւնը՝ ձեր անձին ու ձեր կարողութեան շուրջ, պիտի բարձրացնէ ձեր ինքնավստահութիւնը:

ՕՐԱՏԵՏՐ

ՓԱՌԱՏՕՆ / ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ / ԶՐՈՍԱՇՐՉՈՒԹԻՒՆ

BACARDI Festival advertisement with image of bottles and text: AT LA MARINA JOSEPH KHOURY, ON FRIDAY, JULY 4TH. EXPECT THE UNEXPECTED!

Պաքարտի փառատօնի որմազը Լիբանանի երիտասարդ նուագողներ Ռոնի Պարաք (թմբուկ) եւ Միշէլ Ծատէլ (հարուածային գործիքներ), որոնք տիրացած են իրաւանսեան եւ միջապային մրցանակներու: Անոնք պիտի մատուցեն հարուածային գործիքներու եւ թմբուկի իւրայատուկ համադրում մը, ընկերակցութեամբ Տի Ճէյ Մէտ Ճէմի:

ՄՅՍՕՐ 4 ՅՈՒՆԻՍ 2003 ՊԵՅՐՈՒԹ ՄԱՍԱՄԲ ԱՄՊՈՏ ԶԵՐՄԱՍՏԻՃԱՆ ՅԵՐԵԿ՝ 32°C ԳԻՇԵՐ՝ 24°C ԽՈՆԱՌՈՒԹԻՒՆ՝ 69%



ԱԶԳԱԿ 50 ՏՆՄԻՒ ԵՄԻՆՁ 4 Յուլիս 1953

ԳԱՌՉՈՒԹԻ ԹԱՊԼՈՆԵՐԸ ՄԵԾԱՊԷՍ ԿԸ ԳՆԱՀԱՏՈՒԻՆ Փարիզի «Ֆրանս Սուար» բերքը 22 Յունիս 1953ի թիւին մէջ հայազգի նկարիչ Գառուի (Գառուի Զուլումեան) կը նուիրէ հետեւելու ներքոյի տողերը: Գառու, որ տարի մը առաջ պատրաստուեալ էր օփերայի «Էնտ կալանք»-ի նուազ Փրօքի «Գայլ» պալէին տեքորները, չուզէր մոռնալ, որ ինք նկարիչ է ամէն բանէ առաջ: Յապաղեցնելով պատրաստութիւնը այն տեքորներուն, գործ Մարքի Քիւեւա ապսպրած է իրենց «Ժիգել»-ի համար, Փարիզ, «Տրուան - Տաւիտ» սրահին մէջ կը ցուցադրէ 40 թապլոներ Վենետիկի մասին: Անցեալ Սեպտեմբերին տոներու բաղա-բին մէջ ատեն մը մնալէ ետք վերա-պարձած է ծանրաթեւեղութեամբ մեղ-մազոտ եւ վեհա տեսարաններով, որոնք լիովին կը վերանորոգեն վե-նետիկեան համբաւաւոր խորհրդա-պատկերները՝ եւստ ատենօք Քանա-

# Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն



# ԱՇԽԱՐՀ



## ԿՐՓԱՄԱՐՏ

### ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ ՊԻՏԻ ՄՆԱՅ ՌՈՒՍԻՈՅ ԿԱԶՄԻՆ ՄԷՋ

Ռուսիոյ փոխ արտգործնապետ եւ երկրասարգններու աշխարհի արտգործնապետ Գաբրիել Հայրապետեան պիտի մնայ Ռուսիոյ հաւաքականի մարզիչներուն տրամադրութեան տակ եւ շատ հաւանաբար յառաջիկայ Յունիս 12էն 21 թաւիլէնտի մայրաքաղաք Պանքրքի մէջ իր մասնակցութիւնը բերէ աշխարհի կոփամարտի արտգործնապետութեան մրցումներուն:

Այս մէկը կը նշանակէ, թէ 48 քկ. դասակարգի մրցումներուն մաս կազմող Հայրապետեան, Հայաստանի հաւաքականին մաս կազմելու երբեք յոյս պիտի չունենայ:

## ՃԱՏՐԱԿ

### ԷԼԻՆԱ ԴԱՆԻԷԼԵԱՆ՝ ԱՌԱՋԻՆ

Հայաստանի ճատրակի ազգայնաց արտգործնապետու աւարտին մնացած է երկու հանգրուան միայն եւ ընդհանուր դասակարգման պարագլուխի դիրքը գրաւող էլինան Դանիէլեան աթմ ունի 6 կէտ: Դրդ հանգրուանին իր կատարած մրցումին Դանիէլեան հաւասարութիւն մը արձանագրեց Նոնա Սահակեանի հետ:

Մնացեալ ճակատումներուն, Գոհար Հիլաթեան պարտութեան մատնեց Մարինէ Գասպարեանը, Նելլի Աղինեան՝ Լուսինէ Ապրէսեանը, Նարինէ Գասպարեան՝ Նունէ Դարբինեանը եւ վերջապէս Լիլիթ Քալոյեան՝ Սիրանոյ Անդրէասեանը:

### ՊԱՐՍԵԼՈՆԱՅԻ ՆԵՐՔԻՆ ԴԱՍԱԽՈՐՈՒՄՆԵՐԸ

Պարսելոնայի պատասխանատուները երէկ յայտնեցին, թէ մինչեւ յառաջիկայ Յունիս 17 պայմանաժամ տուին հոլանտացի մարզիկ Փաթրիք Քլուիվերթի, որ պիտի պիտի ան կամ իր պայմանագրութիւնը նորոգէ եւ կամ հեռանայ կապէն:



Քլուիվերթ

Անիկա յայտնեց, թէ ծրագիր ունի Քլուիվերթի ամսականը նուազեցնել: Եթէ ան այդ մէկին համաձայն գայ, կրնայ մնալ, ապա թէ ոչ նոր ակումբի մը փոխանցուի: Անոր փոխանցման համար Պարսա կը պահանջէ երկու միլիոն ամերիկեան տոլար:

Ներկայիս կը խօսուի Մանչեսթըր Եունայթըտի մասին, որուն մաս կը կապմէ անոր ազգակիցը՝ Ռուտ վան Նիսթըրլոյ: Կը խօսուի նաեւ Արսենալի մասին:

Նիւթական տագնապի մէջ եղող Պարսելոնա, այժմ պիտի սպասէ մինչեւ Յունիս 17, որմէ ետք միայն պիտի յտակարարուի, թէ պիտի կարենա՞յ յայտնաբերել արտադրողի չեղի քիւրքը, որ մաս կը կապմէ Լիթի: Հոլանտացիէն գանձելիք գումարը անիկա պիտի վճարէ Լիթի:

Պարսելոնայի նոր մարզիչ հոլանտացի Ֆրանք Ռիքարտ թէեւ կ'ուզէ պահել Քլուիվերթը, սակայն այս վերջինը 2003-2004 եղանակի արտադրութեան առաջին չորս մրցումներուն պիտի չկարենայ դաշտ ներկայանալ՝ կախակայած ըլլալով: Ան անցեալ եղանակի վերջին հանգրուանի մրցումին կարմիր քարտ ստացաւ մարզիկի մը հետ կռիւ ունեցած ըլլալուն համար:

Նշենք, թէ Քլուիվերթի պայմանագրութիւնը Պարսելոնայի հետ կ'աւարտի 2005ին:

Պարսելոնայի նոր նախագահ Խուան Լափորթա թէեւ համաձայն է գտնուեցաւ հոլանտացի միջազգային միջնապահ Ֆրիլիփ Քոքոսի պայմանագրութեան երկարաձգման, սակայն չուզեց նորոգել անոր ազգակիցին՝ Ֆրանք Տը Պէօրի պայմանագրութիւնը, ինչ որ անակնկալի բերաւ 33 տարեկան վեթերան յետասպառ, որ մեծ յոյսեր ունէր տակաւին կրել Պարսայի շապիկը:

Պարսելոնայի միացող առաջին մարզիկը հանդիսացաւ բերդապահ Միշտի Ռեչպի, որ պատ փոխանցումով մը միացաւ Ֆեներպահչէէն, չորս տարուան պայմանագրութիւն մը ստորագրելով անոր հետ:

Անոր ժամանուը պատճառ դարձաւ, որ մարզիկներու փոխանցման սակարանին վրայ դրուին խումբին երկու բերդապահներուն՝ Ռուպերթո Պոնանտիլի եւ Ռուպերթո Էնքերի անունները: Պարսելոնայի պրակտիկ միջնապահ Թիակո Մորթա շատ հաւանաբար փոխանցուի Ա. Սէ. Միլանի, կը յայտնէ իտալական «Կապիթալ Տել-լո Սփոր» օրաթերթը: 20 տարեկան պրակտիկ միջազգային մարզիկով հետաքրքրուած են այլ ակումբներ ալ:

## ԹԵՆԻՍ. ՌԻՒՄՊԸԼՏԸՆ

### ՌԻԼԻԸՍՍ ՔՈՅՐԵՐԸ ՀԱՍԱՆ ԱԲԱՐՏԱԿԱՆԻՆ

Ռիմպլուրնի աղջըկանց կիսաարտական հանգրուանի մրցումներուն, ամերիկացի Ռիլիըմս քոյրերը՝ Սերենա եւ Վինըս յաղթանակներ արձանագրեցին եւ պահով վեցին արտական մրցումին իրենց տուար: Վաղը՝ Շարթա անոնք կը ճակատին իրարու դէմ:

Երկու քոյրերուն զոհերը դարձան պեղծիքացիներ Ժիւսթին Հենէնը եւ Քիմ Բիլթըրը:

Անցեալ տարուան տիտղոսակիր եւ աշխարհի թիւ մէկ 21 տա-

21էմի մրցաշարքի մը արտականին կը ճակատին իրարու դէմ:

Տղոց քառորդ արտականի մրցումներուն, բրիտանացիներուն վերջին յոյսը հանդիսացող եւ 10րդ դասում թիւ Հենման դուրս մնաց մրցաշարքէն, երբ 7-6, 3-6, 6-3 եւ 6-4 արդիւնքով պարտուեցաւ ֆրանսացի Սեպաս-




Ռոտիք

թիէն Կրոմանէն՝ ճիշդ երեք ժամուան ընթացքին:

Կիսաարտականին (այսօր) ֆրանսացիին կը ճակատի արտադրողի Պարք Ֆիլիպուսի դէմ, որ 4-6, 4-6, 6-3, 6-3 եւ 8-6 արդիւնքով պարտութեան մատնեց գերմանացի Ալեքսանտր Փոփը:

Կիսաարտականի երկրորդ ճակատումը, որ դարձեալ տեղի պիտի ունենայ այսօր, իրարու դէմ պիտի հանէ ամերիկացի Էնտի Ռոտիքը եւ կուիցերիացի Ռոմէ Ֆետերըրը: Անոնք երկուքն ալ պէտք ունեցան միայն երեք սէթերու՝ ապահովելու համար կիսաարտականին իրենց տոմսերը:

Ռոտիք 6-4, 6-2 եւ 6-4 արդիւնքով պարտութեան մատնեց




Ֆետերըր

րեկան Սերենա, մէկ ժամ եւ 10 վայրկեանի ընթացքին 6-3 եւ 6-2 արդիւնքով պարտութեան մատնեց Հենէնը:

Նոյն ճակատագիրին ենթարկուեցաւ նաեւ Քլիսթըրը, որ 4-6, 6-3 եւ 6-1 արդիւնքով պարտուեցաւ Վինըսին: Մրցումը տեւեց 1 ժամ 40 վայրկեան:


Այսպիսով, երկու քոյրերը վեցերորդ անգամ ըլլալով կրան



Կրոման

շուէտացի վեթերան մարզիկ Եոնաս Պիորքմանը, մինչ Ֆետերըրի՝ հոլանտացի Սիենկ Շալթէնը՝ 6-3, 6-4 եւ 6-4 արդիւնքով:

Ֆետերըր իր ասպարէզին ընթացքին առաջին անգամ ըլլալով կրան շիւէմի մրցաշարքի մը կիսաարտականին կը հասնի:



Ֆիլիպուսի

### ԵՈՒ. Է. ԷՖ. Ա. ԿԸ ԶԳՈՒՇԱՑՆԷ ԹՈՒՐԻՏԻՈՅ ԵՒ ԱՆԳԼԻՈՅ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԲԵՐԸ

Եու. Է. Էֆ. Ա. Ինտերպոլի Լենարթ Եոհանսըն շարթապահի յայտարարեց, որ եթէ յառաջիկայ Հոկտեմբեր 10ին, Թուրքիա - Անգլիա մրցումին (Նոյն-2004ի գտում), որեւէ տեսակի հարց ծագի կամ բխում տեղի ունենայ երկու խումբերու համակիրներուն միջեւ, խումբերը երկուքն ալ գործ պիտի դրուին մրցաշարքէն:

Երկու երկիրներն ալ, նախապէս այլ առիթով իրենց անկարգապահ համակիրներուն պատճառով, ազդարարող խումբեր ստացան Եու. Է. Էֆ. Ա. նէ:

### ՎԱՆՔՈՒՎՐՐ ՊԻՏԻ ՅԻՐԸՆԿԱԼԷ 2010 ՁՄԵՌՆԱՅԻՆ ՈՂԻՄՊԻԱԿԱՆԸ



Վանքուվըրի պատասխանատուները՝ ուրախութեամբ մէջ

Վանքուվըր իրաւունք ստացաւ հիւրընկալելու 2010 Ձմեռնային Ողիմպիականի մրցումները, միայն երեք քուէով զերեզանցելով Փիոնկեանը (Հարաւային Բորնո): Քանադական այս քաղաքը յաջողեցաւ հաւաքել 56 քուէ, մինչ Փիոնկեանը՝ 53:

Փրակայի մէջ (Չեխիա) տեղի ունեցած քուէարկութեան ընթացքին, ներկայ էր նաեւ Քանադայի վարչապետ ժան Քրեթիէն, որ իր կատարած յայտարարութեան ընթացքին վստահեցուց, թէ Վանքուվըր առաւելագոյն ձեռով պիտի արդարացնէ իր վրայ դրուած յոյսերը Ձմեռնային Ողիմպիականի մրցումները հիւրընկալելով:

### ՀԱՅԱԶԳԻ ՄԱՐԶԻԿՆԵՐՈՒ ՓԱՅԼՈՒՆ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ

● ՀԱՅԱԶԳԻ մարզիկներ էլ ուղարկուած Համբարձումեան (Սոչի) եւ Գաբրիել Առուստամեան (Մոսկուա), Ռուսիոյ կոփամարտի երիտասարդներու արտգործնապետութեան մրցումներուն աւարտին, հանդիսացան արտգործնապետութեան մէջ:

57 քկ. դասակարգին մէջ Համբարձումեան 32-7 արդիւնքով պարտութեան մատնեց իր մրցակիցը Սեմիրն Քրիվաչովին, իսկ 64 քկ. դասակարգին մէջ, Առուստամեան՝ հայազգի Արմէն Յովսէփեանը (23-15):

Նշենք, թէ արտգործնապետութեան այս մրցումներուն իրենց մասնակցութիւնը բերին 184 կոփամարտիկներ:

● ԵՒՐՈՊԱՅԻ կոփամարտի ֆետերատիոնը յայտարարեց, թէ Եւրոպայի յաջորդ խոյնաճուրիւնը տեղի պիտի ունենայ 2006ի 19էն 26 Մայիսին՝ Պուլկարիոյ Փլովտիվ քաղաքին մէջ:

● ՀԱՅԱՍՏԱՆԻ բազմամարտի արտգործնապետութեան մրցումներուն, կրկնակի արտգործնապետ Մեխակ Էլբակեան, որ 100 մասնակցողներու մէջ հանդիսացաւ առաջին, իր աջ եւ ձախ ձեռքերով զերեզանցելու քուէները:

Արտգործնապետութեան այս մրցումներուն աւարտին ետք յաջողեցան Հայաստանի հաւաքականին մաս կազմողները, որոնք յառաջիկայ Սեպտեմբերին իրենց մասնակցութիւնը պիտի բերեն Մոսկուայի մէջ տեղի ունենալիք աշխարհի արտգործնապետութեան մրցումներուն:

### ՅՈՒՆ ԻՏԱԼԻՈՅ Բ. ԴԱՍԱԿԱՐԳ ՎԵՐԱԴԱՐՁԱԻ...

Շուրջ եօթ եղանակ Չեխիի մաս կազմելու ետք իտալացի վեթերան յառաջապահ Ճիան-Ֆրանքո Յոյա վերադարձաւ հայրենիք եւ միացաւ Բ. դասակարգին մաս կազմող Քալիարիի, մէկ տարուան պայմանագրութիւն մը ստորագրելով անոր հետ:

Վաղը Շարթա, իր ծննդեան 37րդ տարեդարձը տօնող Յոյա, ըսաւ, թէ իր կեանքին ամէնէն դժուար որոշումներէն մէկը տուաւ:

Ան իր նոր ակումբին համակիրներուն ըսաւ, թէ իրմէ հրաշքներ պէտք չէ ակնկալել, որովհետեւ ինք չի կրնար խոստանալ, թէ 2003-2004 եղանակի աւարտին իր կազմը Ա. դասակարգ պիտի բարձրացնէ:

Քալիարիի մարզիչ Ճիանփիլիպո Վենթուրա սակայն մեծապէս գոհ մնաց անոր իտալիա վերադարձով:

● ԻՏԱԼԻՈՅ արտգործնապետութեան կը յայտնէ, թէ 20 միլիոն եւրոյի առաջարկ մը ստացաւ Չեխիէն, որ կը փորձէ ձեռք ձգել իր երկու մարզիկները՝ Էտկար Տալիտը եւ Մարսելո Սալարը:

193 միլիոն եւրո պարտքերու տակ ընկղմած անգլիական ակումբը վստահաբար, որ այդքան գումար պիտի չկարենար ապահովել, առանց ուսումնասիրուած Ռոման Ապրամովիչի, որ համաձայն գտնուեցաւ զնել ակումբը, անոր պարտքերը փակելու համար:

Չեխիի մէկ պատասխանատու յայտնեց, թէ երկու նոր բերդապահներ՝ Մարքո Ամպրոսիո (փոխանցուած՝ Քիեւո Վերոնայէն) եւ Ելեոկրն Մաչո (Մանտրիչէնտէն) ազատ փոխանցումով մը միացան լոնտոնեան կազմին: Առաջինը երեք տարուան պայմանագրութիւն մը ստորագրեց, մինչ երկրորդը՝ երկու տարուան:

Անոնց ժամանուածով խումբէն հեռացան բերդապահներ՝ Էտ Տը Կոյ եւ Ռահիս Իվընց:



Յոյա

**Orient plus**  
ARABIA TRAVEL & TOURS  
Touch New Worlds

**Jarna**  
\$319

3 days - Direct Charter Flight  
Every Tuesday starting from 8 July

Other Destinations  
Boat Trip to  
Cyprus 3 Days Cyprus & Greece  
**\$190 \$425**

BOOK THIS WEEK AND GET 15% DISCOUNT  
ASK FOR OUR FREE CREDIT FACILITIES

01.900598, 901598  
03.258336, 256254  
www.orientplus.com

ԱԶԵՐԻ ԱՅԼԱԽՈՂ ՄԸ ԻՐԱՆԵԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԴԷՄ ՎՏԱՆԳԱԲՈՐ 3ԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԸ ԿԱՏԱՐԷ

Իրանի ազգերի փոքրամասնությունները կայացրեցին Մաճուկուտի Զեհրեկանի Երեքշաբթի օր Պաթուհի մէջ կողմնակից քվեարկությունները...

Ան ըսած է, թէ իրանի մէջ ներկայ վարչակարգը պէտք է փոխարինուի «Երիտասարդ, ժողովրդավար վարչակարգով»...

Ըստ Զեհրեկանի, որ կը գլխավորէ իրանի մէջ Հարաւային Ազգային Վերակազմակերպիչ Շարժումը, ըսած է, թէ իրանի ազգերին երկու 65էն 70 առ հարիւրը բաղկացած է երիտասարդներէ, որոնց երեք-չորրորդը առնուազան «արթնցած է»:

Մասնագէտներու մեծամասնութեան համաձայն, ազգերին երկու 60 միլիոն բնակիչներուն առնուազան մէկ չորրորդը կը բաղկացնեն:

Նախկին երեսփոխան եւ լեզուաբանութեան դասախոս Զեհրեկանի, որ երեք տարի արգելափակուած մնացած է, այժմ ազատի մէջ կ'ապրի:

Պաթուհի մէջ իրանի դեպի արտաքին մէկ բանբերը յայտնած է, թէ Ազգային իշխանութիւններէն պաշտօնական հաղորդագրութիւն մը կը սպասէ Զեհրեկանիի յայտարարութեան հակադարձելէ առաջ:

(Ա.Յ.Փ)

ՊԵՐԼՈՒՍՔՈՆԻ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԷՋ ՃՆՇՈՒՄՆԵՐՈՒ Կ'ԵՆԹԱՐԿՈՒԻ ԻՐ ԱՆՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԵԿ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԵԱՆ ՇԱՄԱՐ

Իտալիոյ վարչապետ Սիլվիո Պերլուսոնի երէկ ճնշումներու ենթարկուեցաւ, որպէսզի ներողութիւն խնդրէ նացիներու կապուած «կատակի» մը համար, որ զայսօր կ'ընդունէր իր անդամները...

Պերլուսոնի պաշտօնակազմը ներողութիւն խնդրէ «ամբողջովին անընդունելի» արտայայտութեան մը համար, որ Եւրոխորհրդարանի գերմանացի մէկ անդամը նմանցուցած էր նացիներու կեղրնացման ճամբարներու մէկ պահակին:

Իտալիա Երեքշաբթի օր Յունաստանէն

ստանձնած էր Եւրոպական Միութեան նախագահութիւնը:

Անոր արտայայտութիւնը զայսօր կ'ընդունէր Եւրոպայի տարածքին: Թերթերը յայտնած են, թէ իտալացի պաշտօնատարը Ե. Միութեան վեցամսեայ նախագահութեան սկսած է վատ ձեռքով:

Պերլուսոնի իր արտայայտութիւնը ունեցած է Չորեքշաբթի օր, Սթրասբուրգի մէջ գտնուող Եւրոխորհրդարանին ներկայացուցած էր նացիներու կեղրնացման ճամբարներու մէկ պահակին:

Ան արագօրէն պարագայ է, երբ գերմանացի երեսփոխան Մարթին Շույց պատասխանած է անոր արտասանած խօսքին, ի միջի այլոց նշելով անոր դէմ ուղղուած ամբաստանութիւնները եւ նախապէս անոր ինքնազրկուած իրաւական հարցերը (երբ ան անդամ էր Եւրոխորհրդարանին):

Պերլուսոնի հակադարձութիւնը, ըսելով. «Բեմադրիչ մը ներկայացուցած էր ներկայիս նացի կեղրնացման ճամբարներու մասին ժամպաւէն մը կը պատրաստէ: Կ'առաջարկեմ, որ անոր մէջ

բանտապահի դեր ստանձնէք»:

Պերլուսոնի մէջ Իտալիոյ դեսպանը կանչուած է Շրէտսերի գրասենեակը, ուր բարձրաստիճան պաշտօնատարներ Գերմանիոյ դոկտորները արտայայտած են:

Պերլուսոնի շուրջ լայնածիր բանավէճեր տեղի ունեցած էին անոր Ե. Միութեան նախագահութիւնը ստանձնելէ առաջ, յատկապէս ինչ կը վերաբերէր Եւրոպայի առաջնորդներու անոր յարմարութեան, նկատի ունենալով մէկ կողմէ անոր գործարար-



ՌԻՍԱՆՈՂՆԵՐ 3ԱՅԱԴՈՒԼԻ ԴԻՄԱԾ ԵՆ՝ ՊԱՅԱՆՋԵԼՈՎ ԻՐԵՆՅ ԴԱՍԸՆԿԵՐՆԵՐՈՒՆ ԱՉԱՏ ԱՐՁԱԿՈՒՄԸ

Թեհրանի եւ Նահանգային այլ համայնարաններու քանի մը ուսանողներ Երեքշաբթի օր հացադուլի դիմած են՝ պահանջելով իրենց դասընկերներուն ազատ արձակուածը, հաղորդած են թերթերը երէկ: Անոնք ձեռք բերուած են անցեալ ամիս վարչակարգին դէմ տեղի ունեցած բողոքի ցոյցերուն ընթացքին:

Կարգ մը տեղեկութիւններու համաձայն, իրանի բարեկարգչական խորհրդարանին անդամ երեսփոխաններու պատուիրակութիւն մը Թեհրանի մէջ տեսակցութիւն ունեցած է հացադուլի դիմած ուսանողներուն հետ:

Յունիս 10էն 20 ձեռք բերուած 4000 անձերէն 2000ը տակաւին արգելափակուած կը մնան, ըստ արդարադատութեան մարզի մէկ պաշտօնատարին:

Միւս կողմէ, ակնատեսներու եւ տեղեկագիրներու համաձայն, իրանեան ապահովութեան ուժերը շարք մը յարձակումներու ձեռնարկած են՝ թիրախ ունենալով Թեհրանի կարգ մը վայրերու մէջ արբանեակային արգելուած «տիչ» երու սեփականատէրեր: Այդ վայրերը վերջին բողոքներուն թատերաբեմ եղած են:

Տեղեկագիրներու համաձայն, սեփականատէրերը ստեղծներու կողմէ կանչուած են եւ անոնց տուգանքներ սահմանուած են:

Մինչ այդ, ծայրայեղ արմատական թերթ մը՝ «Շահաբար» երէկ իր առաջին էջը յատկացուցած էր Բրիտանիոյ արտաքին գործոց նախարար Չէք Սթրոյնի, գործողութիւնը Ե. Նահանգներու նախագահ ձորձ Պուշինի «ընտանի շունը», հարց տալով, թէ անոր ինչո՞ւ արտօնուած է Թեհրան այցելել:

Միւս կողմէ, Մ. Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլը Չորեքշաբթի օր յայտնած է, թէ Մ. Նահանգներ պէտք է խուսափին իրանի վարչակարգին դէմ բողոքներու զերակատարութիւն ունենալէ, բացառելով, որ ամերիկեան շահերուն աւելի օգտակար պիտի ըլլայ ետ կենալ եւ սպասել, տեսնելու համար, թէ ցոյցերը որեւէ ազդեցութիւն պիտի ունենան:

Ան հազիւ 10 օր առաջ ըսած էր, թէ Ուաշինկթընի պատրաստութիւնն է գործով կանգնելու իրանի ուսանողներու եւ ուրիշներու, որոնք իսլամական վարչակարգին դէմ բողոքներու զերակատարութիւն ունենալէ, բացառելով, որ ամերիկեան շահերուն աւելի օգտակար պիտի ըլլայ ետ կենալ եւ սպասել, տեսնելու համար, թէ ցոյցերը որեւէ ազդեցութիւն պիտի ունենան:

Միւս կողմէ, Մ. Նահանգներ երէկ պատժամիջոցներ հաստատած են չինական 5 ընկերութիւններու եւ հիւսիսային քորէական ընկերութեան մը դէմ՝ իրանի գէնք ծախած ըլլալու յանցանքով, ինչ որ կրնայ «նիւթական մասնակցութիւն ըլլալ հաւաքական բնաջնջումի գէնքերու կամ Տրիբուններու մշակումին»: Յստակ չէ, թէ ճիշդ ինչպիսի՞ գէնքեր ծախուած են:

ՄԱՐԻԱՄ ՌԱՃԱԻ ԱՉԱՏ ԱՐՁԱԿՈՒԵՑԱԻ



Ռաճայիի ազատ արձակումը: Իրեն դէմ ուղղուած ամբաստանութիւնները հստակաբար հերքած էր:

ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

● ԴԱՄԱՍԿՈՍ.— Սուրիոյ նախագահ Պաշշար Ասադ Չորեքշաբթի օր իրամասնագիրով մը ներում շնորհած է Կիւնտրագրեալ դասախօսներու եւ այլ յանցանքներով մասնաւորապէս կարգ մը արգելափակուածներու, պայմանաւ որ դրամաւորները մինչեւ 3 ամիս անձնատուր ըլլան:

● ՌԻԱՏ.— Սէնտական Արաբիոյ մէջ ամէնէն աւելի հետապնդուած իսլամական ծայրայեղական թուրքի Տանտանի անձնասպան եղած է երէկ, երկրին հիւսիսային շրջանին մէջ, երբ ապահովութեան ուժեր պատրաստուած էին գայն ձերբակալելու:

● ԱՆԳԱՐԱ.— Հիւսիսային Թուրքիոյ մէջ Կիւնտր Եր Կապանուած է եւ Երուսաղիմի վերադարձուած են երէկ, երբ «Մաս» իսլամական քաղաքային խմբակի մը անդամներ կրակ բացած են բանակային միաւորի մը վրայ:

տի մը պիտի ձեռնարկէ: ● ՄՈՍԿՈՒԱ.— Ռուսաստանի նախագահ Իոն Բիլեցուց երէկ ողջունած է Ռուսիոյ նախագահ Վլադիմիր Փութինի հետ այսօր կնքուելիք համաձայնագիր մը, որ երկու երկրներուն միջեւ առևտուրին թափ պիտի տայ:

● ՌԻԱՇԻՆ ԿԹԸԼ.— Ամերիկեան արտաքին գործոց նախարարութիւնը Չորեքշաբթի օր յայտնած է, թէ Չինաստան մարդկային իրաւանց իր մարտը բարելաւելու գծով իր յանձնարարութիւնները չէ յարգած:

● ՄՈՍԿՈՒԱ.— Ռուսիոյ ընդդիմադիր Եսպլոք Կուսակցութիւնը երէկ դիմագրութիւն պահանջած է, իր երեսփոխաններէն՝ թղթակից եւ մարդկային իրաւանց պաշտպան Եուրի Շչեքունիի խորհրդաւոր գերզգայնութեան մը զոհ երթալէ ետք:

● ԵԱՊԼՈՔՕԻ դեկավար Կրիկորի Եաւրիստի թղթակիցներու յայտնած է, որ բժիշկներ չեն կրցած բացատրել գերզգայնութիւնը, որուն Չորեքշաբթի գիշեր Կոնգաձ է երեսփոխանը:

ԻՐԱՔԻ ՄԷՋ ԲԱԻԱՐԱՐ ՌԻՇ ՌԻՆԻՆՔ...

Շարունակուած Ա. Էջէն

մէջ, ամերիկեան երկու փոխադրականներ թիրախ դարձան ականի մը եւ վեց զինուորներ վիրաւորուեցան: Շրջանի բնակիչները ըսին, որ մոթոսիքի վրայ երկու զինեալներ ձեռնառումը մը նետոցի փոխադրականներուն վրայ:

Մայրաքաղաք Պաղատի մէջ ալ միջազէպ մը արձանագրուեցաւ, երբ ամերիկացի զինուորներ բախում ունեցան: Ամերիկացի զինուոր մը վիրաւորուեցաւ, իրաքցի զինեալ մը սպաննուեցաւ եւ անոր ընկերակցող մանուկ մը վիրաւորուեցաւ: Ամերիկացի բանբեր մը սակայն ըսաւ, որ բախում չէր, այլ հրթիռներ արձակուած էին ամերիկեան փոխադրականներու վրայ:

Պաղատի հիւսիսարեւելքը գտնուող Պաթուկա քաղաքին մէջ իրաքցի մը սպաննուեցաւ, երբ բողոքի ցոյցի մը ընթացքին ական մը պայթեցաւ: Ամերիկեան ուժերը կրակ բացին ցուցարարներուն վրայ՝ չորս հոգի վիրաւորուեցաւ: Յոյճը ծայր տուած էր, երբ ամերիկեան ուժերը ձեռք բերուեցին շի զեկավար մը: Աւելի քան հարիւր զինուորներ մտած էին Ալի Ապտէլ Քարիմ Մատանիի բնակարանը, գոր խուզարկելէ ետք ձեռք բերուած էին Մատանիի եւ ութ ուրիշներ: Մատանի փոխադրուած է ամերիկեան գործոց մը, յայտնեց անոր եղբայրը:

● ԱՒՍՏՐԻԱԿԱՆ տեղեկատու աղբիւրներ հաղորդեցին, որ իրաքի արտաքին գործոց նախկին նախարարը՝ Նաֆի Մապրի աւստրիական ընկերութեան մը ընկերակցին հետ ձեռք կը գործածէ եւ թէ հաւանաբար ան Ալըստրիա ապաստանած է:

(Ա.Յ.Փ)

FUEL CARD գործածեցէք
Պենզինի գնման, ինչպէս նաեւ ձեր ինքնաշարժներուն իւղը փոխելու կամ զանոնք լուալու պարագային:
Երբ մագուր պիտի գնէք, գործածեցէք FUEL CARDը՝ հեռաձայնելով 04 / 715111 - 222 - 333 թիւերուն:
MANAR - Տորա
ԱՍՐԳԻՍԵԱՆ - Պուրձ Գամուտ
BASSIL - Տորա, կամուրջի մօտ
AKEL եւ BASSIL - Տորա, «Քրետի Լիպանտ»ի մօտ
SPEED - Գանքաշ, Կալէրի Իթթիհատ
ՅԱՅԱԿԱՆ ԿԱՅԱՐԱՆ - «Ալմագա»
MALLAH - Աճիլիաս, կաթողիկոսարանի դիմաց
MALLAH - Գարեթ Ղաուարնի
MALLAH - Պալիմ
MALLAH - Ժալի Տիպի մայրուղի
CORAL - Էշրեֆիէ, Ս. Յակոբ Եկեղեցույ մօտ
SAAD - Մար Միայլի
SPEED - Նահր, «Փոօօ» ընկերութեան մօտ
PHOENICIA - Այնճարի մուտքից
MALLAH - Պապալտէթ